ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ -- ---------- 2022թ.

ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՏՆՕՐԵՆ
Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ _____

Կ.Տ.

ԾՐԱԳԻՐ


«Վարսավիրական գործի կարողությունների և հմտությունների տիրապետման դասընթաց»

ք. Երևան 2022թ.

ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

➢ Հիգիենայի և անվտանգության կանոններ	2 ժամ
➢ Գործիքներ և սարքավորումներ	2 ժամ
➢ Մազերի խնամք և նախապատրաստում	2 ժամ
➢ Մազերի հարդարում	10 ժամ
➢ Մազերի ներկում	22 ժամ
➢ Պարզ և բարդ հանդիսավոր սանրվածքներ	10 ժամ
➢ Կանանց մազերի կտրում	20 ժամ
➢ Տղամարդկանց մազերի կտրում	6 ժամ
➢ Մասնագիտական պրակտիկա՝ իրական հաճախորդների անվճար սպասարկում	26 ժամ
➢ Այց մասնագիտական միջավայր՝ գեղեցկության սրահ, խանութ	4 ժամ
➢ Գիտելիքի ստուգում	4 ժամ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ



Շաբաթական ծրագիր՝ ըստ դասաժամերի (փոփոխության ենթակա)

Օրեր / Դասա ժամեր	Երկուշաբթի	Երեքշաբթի	Չորեքշաբթի	Հինգշաբթի	Ուրբաթ	**Ընդամենը**
	3	-	3	3	-	**9**

Դասընթացի նպատակը

Դասընթացի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ վարսավիրական գործի վերաբերյալ. այդ թվում՝ հիգիենայի և անվտանգության կանոններ, վարսավիրական գործիքների, պարագաների, սարքավորումների, նյութերի ճիշտ օգտագործում և կիրառում, մասնագիտական կարողությունների և հմտությունների ձևավորում:

Ռեսուրսները

Թեմաների ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Գործնական պարապմունքներն իրականացվում են լաբորատոր պայմաններում՝ արդյունքների կատարման չափանիշները բավարարելու համար անհրաժեշտ նյութերի, գործիքների, պարագաների, սարքավորումների առկայությամբ:

Դասընթացի մասնակիցները

Դասընթացին կարող են մասնակցել նրանք, ովքեր

1. ՈՒնեն անհրաժեշտ հետաքրքրվածություն վարսավիրական ոլորտի նկատմամբ:
2. Տիրապետում են հայերեն լեզվին:
3. Ցանկանում են ստանալ կարողություններ և հմտություններ վարսավիրական ոլորտում:
4. Կարող են կանգնած աշխատել և ունեն մատների բավարար շարժունակություն:
5. Քիմիական նյութերի հանդեպ ալերգիկ չեն:
6. Պատրաստ են աշխատելու ցանկացած հաճախորդի հետ՝ առանց հակակրանքի և խտրականության:

➢ Հիգիենայի և անվտանգության կանոններ

Տևողությունը	**2 ժամ**
Տեսական	1 ժամ
Գործնական	1 ժամ

Նպատակն է՝ ուսանողին տալ գիտելիքներ, կարողություններ և հմտություններ՝ գործնականում վարսավիրի աշխատանքի նախապատրաստման համար:

ԾՐԱԳՐԱՅԻՆ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ

- Սանիտարիայի նորմերի պահպանումը տարբեր իրավիճակներում:
- Ախտահանման նյութեր:
- Գործիք-սարքավորումների օգտագործման ժամանակ անվտանգության կանոնների պահպանում:

➢ Գործիքներ և սարքավորումներ

Տևողությունը	**2 ժամ**
Տեսական	1 ժամ
Գործնական	1 ժամ

Նպատակն է՝ ուսանողին տալ գիտելիքներ, կարողություններ և հմտություններ՝ գործնականում վարսավիրի աշխատանքի նախապատրաստման համար:

ԾՐԱԳՐԱՅԻՆ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ

- Գործիքների դերն ու նշանակությունը :

➢ Մազերի խնամք և նախապատրաստում

Տևողությունը	**2 ժամ**
Տեսական	1 ժամ
Գործնական	1 ժամ

Նպատակն է՝ ուսանողին տալ գիտելիքներ, կարողություններ և հմտություններ՝ գործնականում վարսավիրի աշխատանքի նախապատրաստման համար:

ԾՐԱԳՐԱՅԻՆ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ

- Բուժիչ նյութերի տեսակները:
- Բուժիչ դիմակների ճիշտ օգտագործումը:
- Բնական դիմակների կիրառումը:
- Բնական բուժիչ դիմակներ՝ թափվող մազերի համար:
- Բուժիչ դիմակների կիրառումը՝ անվտանգության և սանիտարահիգիենիկ նորմերի պահպանումը:
- Գլխամաշկի տիպը:
- Համապատասխան դիմակների կիրառումը՝ ըստ մազի որակի:
- Գլխամաշկի մերսումը:

➢ Մազերի հարդարում

Տևողությունը	**10 ժամ**
Տեսական	2 ժամ
Գործնական	8 ժամ

Նպատակն է՝ ուսանողին տալ գիտելիքներ, կարողություններ և հմտություններ հարդարման աշխատանքներ իրականացնելու համար:

ԾՐԱԳՐԱՅԻՆ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ

- Ստուգել մազի որակը:
- Ընտրել համապատասխան լվացող և վերալվացող նյութեր:
- Լվանալ մազերը:
- Կատարել գործիքների պարզ սպասարկում:

- Կատարել մազաբաժանում՝ ըստ հարդարման ձևի:
- Հարդարել մազերը ուղիղ:
- Հարդարել ստորակետ ձևով:
- Հարդարել խառը՝ մազի արդուկով:
- Հարդարել խառը՝ ամրակներով:
- Կատարել դիֆուզորով աշխատանք:
- Հարդարել ունելիով:

➢ Մազերի ներկում

Տևողությունը	**22 ժամ**
Տեսական	4 ժամ
Գործնական	18 ժամ

Նպատակն է՝ ուսանողին տալ գիտելիքներ, կարողություններ և հմտություններ մազերի ներկման աշխատանք իրականացնելու համար:

ԾՐԱԳՐԱՅԻՆ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ

- Ընտրել համապատասխան ներկանյութը:
  Ներկերի տեսակները՝ քիմիական, կիսաքիմիական, բնական, տոնիկներ, գունաբացող նյութեր:
- Գերօքսիդի տեսակները:
- Ստուգել մազի որակը:
- Ընտրել համապատասխան ներկանյութը:
- Ժամանակի ճիշտ ընտրումը ներկելու ընթացքում:
- Քիմիական ներկի ճիշտ օգտագործումը:
- Կիսաքիմիական ներկանյութի օգտագործումը:
- Տոնիկների օգտագործումը:
- Բնական ներկի բաղադրությունը:
- Գունաբացող նյութի ճիշտ օգտագործումը:

Նպատակն է՝ ուսանողին տալ գիտելիքներ, կարողություններ և հմտություններ մազերի ներկման աշխատանք իրականացնելու համար:

➢ Պարզ և բարդ հանդիսավոր սանրվածքներ

Տևողությունը	**10 ժամ**
Տեսական	2 ժամ
Գործնական	8 ժամ

Նպատակն է՝ ուսանողին տալ գիտելիքներ, կարողություններ և հմտություններ՝ սանրվածքներ իրականացնելու համար:

ԾՐԱԳՐԱՅԻՆ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ

- Սանրվածքին անհրաժեշտ նյութեր՝ ոսկ, լաք, գել:
- Սանրվածքին անհրաժեշտ գործիք-սարքավորումներ՝ ունելի, արդուկ, վարսահարդարիչ:
- Օժանդակ պարագաներ՝ կոսերի տեսակներ, ամրակներ, մազակալներ:
- Գործողության ընթացքում պահպանել անվտանգությունը և հիգիենան:
- Սանրվածքների տեսակներ՝ հյուսքեր, լոքոններ:
- Արհեստական մազափնջերի տեղադրում:
- Կոսերի տեսակները և տեղադրումը:
- Տոնական, երեկոյան սանրվածքներ:
- Մանկական սանրվածքներ:
- Սանրվածք գանգուր մազերի համար:
- Դասական և հարսանեկան սանրվածքներ:
- Ձևավորել մազափունջը համապատասխան դետալներով:

➢ Կանանց մազերի կտրում

Տևողությունը	**20 դասաժամ**
Տեսական	2 ժամ
Գործնական	18 ժամ

Նպատակն է՝ ուսանողին տալ գիտելիքներ, կարողություններ և հմտություններ կտրման աշխատանքներ իրականացնելու համար:

ԾՐԱԳՐԱՅԻՆ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ

- Ստուգել մազի որակը:
- Ընտրել համապատասխան լվացող և վերալվացող նյութեր:
- Լվանալ մազերը:

- Կատարել գործիքների պարզ սպասարկում:
- Հարմարեցնել թղթե օձիքը և կտրման թիկնոցը:
- Սանրել մազերը:
- Կատարել մազաբաժանում ըստ կտրման ձևի:
- Կտրել ըստ տեխնոլոգիայի հերթականության:

➢ Տղամարդկանց մազերի կտրում

Տևողությունը **6 դասաժամ**
Տեսական 2 ժամ
Գործնական 4 ժամ

Նպատակն է՝ ուսանողին տալ գիտելիքներ, կարողություններ և հմտություններ կտրման աշխատանքներ իրականացնելու համար:

ԾՐԱԳՐԱՅԻՆ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ

- Ստուգել մազի որակը:
- Ընտրել համապատասխան լվացող և վերալվացող նյութեր:
- Լվանալ մազերը:
- Կատարել գործիքների պարզ սպասարկում:
- Հարմարեցնել թղթե օձիքը և կտրման թիկնոցը:
- Սանրել մազերը:
- Կատարել մազաբաժանում ըստ կտրման ձևի:
- Կտրել ըստ տեխնոլոգիայի հերթականության:

➢ Մասնագիտական պրակտիկա

Տևողությունը **26 ժամ**

Դասընթացի ավարտին նախատեսվում է կազմակերպել մասնագիտական պրակտիկա, որի ընթացքում դասընթացի մասնակիցները հնարավորություն կունենան անվճար սպասարկելու իրական հաճախորդների՝ կատարելով վերջիններիս հրահանգները:

➢ Այց մասնագիտական միջավայր՝ գեղեցկության սրահ, խանութ

Տևողությունը **4 ժամ**

Դասավանդողները կազմակերպում են **այց մասնագիտական միջավայր** (գեղեցկության սրահ, մասնագիտական խանութ)՝ դասընթացի մասնակիցներին

ծանոթացնելով մասնագիտական, աշխատանքային տարատեսակ գործիքների մանրամասների հետ:

- **Գիտելիքի ստուգում**

Տևողությունը 4 ժամ

Ըստ իրական հաճախորդի հետ ձեռք բերված համաձայնության՝ դասընթացի մասնակիցը կատարում է մազերի կտրում, հարդարում, հյուսքեր, պարզ և բարդ հանդիսավոր սանրվածքներ:

Կազմեց՝ Գ. Փոլադյան
Արտ. ուս. վարպետ